

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԲ-ԲՄԱՇՁԲ-18/80**

ք. Երևան

«26» հունիսի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արալպլաստ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ալավերդյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Կոմիտասի անվան Պանթեոնի հարակից այգու վերակառուցման ու բարեկարգման** աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ օգոստոսի 30-ը**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **149310000 (հարյուր քառասունինը միլիոն երեք հարյուր տաս հազար) ՀՀ դրամ, որից 24885000 (քսանչորս միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են քանակությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում էրևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410487
ՀՎՀՀ 02593108

Կապալառու

«Արալպլաստ» ՍՊԸ
Ք. Երևան, Չեխովի 12ա 31
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2474500282840010
ՀՎՀՀ 02240129

Գ. Չթրյան



Ա. Ալավերդյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Երևան քաղաքի Կոմիտասի անվան Պանթեոնի հարակից այգու վերակառուցման ու բարեկարգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շիանաբարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Անցուղիների խարխուլ քայքայված բետոնե սալիկների քանդում, ենթաշերտով /4011մ2/	մ ³	401.1000	14.0060	5617.8066
2	Առկա քայքայված բազալտե սալերի քանդում ենթաշերտով	մ ²	703.0000	3.6610	2573.6830
3	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	896.0000	2.8850	2584.9600
4	Քայքայված բետոնե և բազալտե եզրաքարերի քանդում բետոնե հիմքով /այդ թվում բետոնե աստիճաններ/	զմ	2224.0000	0.7940	1765.8560
5	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	219.3210	2.8850	632.7411
6	Առկա բետոնե քայքայված ձևավոր շատրվանի քանդում	մ ³	19.7000	14.0060	275.9182
7	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	43.3000	2.8850	124.9205
	Գլխավոր մուտքի վերանորոգման աշխատանքներ, աջակողմյան և ձախակողմյան զետեղարաններ				0 0000
8	Աջակողմյան և ձախակողմյան պատերում խորշերի քանդում /սախկինում փակված/	մ ²	6.5000	0.7400	4 8100
9	Հատակի քայքայված բետոնե շերտի քանդում 10սմ հաստությամբ /8.3մ2/	մ ³	0.8300	14.0060	11.6250
10	Պատերի և առաստաղին խարխուլ սվաղի շերտերի քանդում	մ ²	70.0000	0.1670	11.6900
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.0800	2.8850	6.0008
12	Խճի շերտի պատրաստում հատակների տակ 10սմ հաստությամբ	մ ³	0.8000	10.5600	8.4480
13	B-12.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ	մ ³	0.8000	28.0630	22.4504
14	30սմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ ²	8.3000	0.9760	8.1008
15	Կերամիկական սալերից հատակների պատրաստում	մ ²	8.3000	7.6650	63.6195
16	Շրիշակների տեղադրում կերամիկական սալերից 10սմ բարձրությամբ	մ ²	1.6000	8.4100	13.4560
17	Մ/պլաստե սպիտակ պրոֆիլով ապակեփաթեթ կամարաձև պատուհանների տեղադրում, բացվող	մ ²	6.0000	38.7500	232.5000
18	Մ/պլաստե սպիտակ պրոֆիլով ապակեփաթեթ կամարաձև պատուհանների տեղադրում, չբացվող	մ ²	4.8000	28.6320	137.4336

19	Մ/պլաստե սպիտակ պրոֆիլով ապակեփաթեթ դռան տեղադրում	մ ²	1.9400	27.6780	53.6953
20	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ ²	46.0000	1.8380	84.5480
21	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ ²	8.3000	2.1950	18.2185
22	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	46.0000	1.2250	56.3500
23	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ ²	8.3000	1.3420	11.1386
24	Առկա բազալտե ճարտարապետական ձևավոր մուտքի կամարապատ պատերի մաքրում ավազաշթով	մ ²	360.0000	0.1940	69.8400
	Շին բարեկարգման աշխատանքեր				0.0000
25	B-15 դասի բետոնից թեքահարթակի պատրաստում /5տեղ/	մ ³	2.7000	31.5550	85.1985
26	B-15 դասի բետոնից աստիճանների պատրաստում	մ ³	6.2000	30.7480	190.6376
27	Թեքահարթակի երեսպատում 40մմ հաստությամբ բազալտե սալերով	մ ²	25.0000	12.5580	313.9500
28	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 40մմ և 30մմ հաստությամբ բազալտե սալերով /51.6x0.45/մ	մ ²	23.2200	14.9040	346.0709
29	Թեքահարթակների մետաղական փոշեներկված բազրիքների տեղադրում /միակմանի/ H=0.9	զմ	13.5000	11.2180	151.4430
30	Արահետների տակ 5սմ հաստությամբ խճի շերտի պատրաստում /5357մ ² / այդ թվում գրուցատաղավարների տակ	մ ³	267.8500	10.5600	2828.4960
31	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ 6սմ հաստությամբ	մ ³	321.4200	24.2870	7806.3275
32	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ ³	267.8500	9.9480	2664.5718
33	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում /6սմ հաստությամբ/	մ ²	5357.0000	4.3170	23126.1690
34	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /15x300/մմ	զմ	2285.0000	7.9960	18270.8600
	Ջրավազան-շատրվանի կառուցում				0.0000
35	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով, բարձելով ա/խիքնաթափերի վրա	մ ³	51.0000	0.5260	26.8260
36	Ավելնորդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	94.0000	2.1640	203.4160
37	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով թողնելով տեղում	մ ³	15.0000	1.9840	29.7600
38	2-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	15.0000	0.8290	12.4350
39	2-րդ կարգի բնահողի տոփանում	մ ³	15.0000	0.1950	2.9250
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ				0.0000
40	Միաձույլ ե/բ պատերի պատրաստում B-25 դասի բետոնից	մ ³	6.8000	53.3420	362.7256
41	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.2700	328.9680	88.8214
42	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.0680	336.9140	22.9102
43	Միաձույլ ե/բ հատակի պատրաստում B-25 դասի բետոնից	մ ³	7.7000	38.4910	296.3807
44	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.6500	328.9680	213.8292
45	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.1200	336.9140	40.4297
	Ճարտարապետաշինարարական մաս				0.0000

46	Արտաքին պատերի ջրամեկուսացում 2 շերտ քիտումի քսուկով	մ ²	17.0000	0.9490	16.1330
47	Պատերի ց/ավազե սվաղ ցանցով /ներքին մակերևույթ/	մ ²	12.0000	2.8910	34.6920
48	Պատերի ջրամեկուսիչ շերտի պատրաստում 2 շերտ իզոգամից	մ ²	12.0000	2.8150	33.7800
49	Պատերի ց/ավազե սվաղ ցանցով	մ ²	12.0000	2.8910	34.6920
50	Պատերի երեսապատում հախճաապլերով /մոզայիկ հախճաապլով/	մ ²	12.0000	7.5650	90.7800
	Հատակներ				0.0000
51	Խճի նախաշերտի պատրաստում 10 սմ հաստությամբ	մ ³	2.4000	10.5600	25.3440
52	30սմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտի պատրաստում	մ ²	38.5000	0.9760	37.5760
53	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում 2 շերտ իզոգամից	մ ²	38.5000	1.3830	53.2455
54	40սմ հաստությամբ ամրանավորված ց/ավազե հարթեցնող շերտ	մ ²	38.5000	1.2510	48.1635
55	4Յթ-1 ամրանային ցանցի արժեքը	տն	0.0800	377.4390	30.1951
56	Կերամիկական սալերից հատակների պատրաստում /մոզայիկ/	մ ²	38.5000	7.6650	295.1025
57	Պատերի արտաքին հատվածի երեսապատում 30սմ հաստությամբ տրավերտինե սալերով սալերի խարսխումով	մ ²	6.2000	25.7300	159.5260
58	50սմ հաստությամբ տրավերտինե գլխաթասերի տեղադրում	մ ²	24.5000	25.6110	627.4695
59	Ավազամանի տեղադրում /առանց գլխածածկույթի/	հատ	3.0000	19.5470	58.6410
	Տեխնոլոգիական մաս				0.0000
60	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=133x4,5մմ հողի մեջ հիդրավլիկ փորձարկումով	գմ	52.0000	5.9420	303.9840
61	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=325x6մմ հողի մեջ հիդրավլիկ փորձարկումով	գմ	16.0000	19.0760	305.2160
62	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=89x4,5մմ հողի մեջ հիդրավլիկ փորձարկումով	գմ	4.0000	4.0980	16.3920
63	Խողովակաշարի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում Ø133x4,0մմ	գմ	52.0000	1.1630	60.4760
64	Խողովակաշարի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում Ø325x6,0մմ	գմ	16.0000	2.7760	44.4160
65	Խողովակաշարի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում Ø89x4,5մմ	գմ	4.0000	1.0080	4.0320
66	Բաժանարար խցի պատրաստում և տեղադրում D=0,8մ, h=0,2մ, b=6մմ /2կողմից փակելով/	կգ	115.0000	1.9930	229.1950
67	d=125մմ մետաղական անկյունակի արժեքը	հատ	8.0000	4.2330	33.8640
68	d=80մմ մետաղական անկյունակի արժեքը	հատ	8.0000	1.5890	12.7120
69	d=125x80մմ մետաղական եռաբախշիչի արժեքը	հատ	4.0000	4.5770	18.3080
70	d=15մմ մետաղական խողովակ մեկ կողմը պարուրակով L=13,2սմ	հատ	104.0000	0.1720	17.8880
71	d=15մմ մետաղական կցորդիչ	հատ	104.0000	0.2380	24.7520
72	d=15մմ գունավոր մետաղից կցաշուրթ	հատ	104.0000	2.3840	247.9360
73	Մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ ²	2.5000	1.0050	2.5125
74	Չետաղարձ, ավելցուկային և դատարկման ջրերի մետաղական տաշտակների պատրաստում և տեղադրում 6մմ հաստ. թերթապողպատից	տն	0.0320	483.5060	15.4722

75	d=108x4,5մմ մետաղական խողովակ հողի մեջ հիդրավլիկ փորձարկումով	գմ	12.0000	4.7580	57.0960
76	Թուջե սողնակ d=100մմ	հատ	1.0000	13.3540	13.3540
77	Կոյուղու կլոր դիտահորի պատրաստում հավաքովի ե/բ էլեմենտներից Φ 1,5մ ծածկի սալով	մ ³	1.6000	65.6560	105.0496
78	Թուջե մտոցի արժեքը	հատ	1.0000	66.7470	66.7470
	Պոմպակայանի շինարարական աշխատանքներ				0.0000
79	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով բարձելով ա/հինքնաթափերի վրա	մ ³	57.0000	0.5260	29.9820
80	Ավելներդ բնահողի տեղափոխում 13կմ	տն	102.6000	2.1640	222.0264
81	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում h=10սմ	մ ³	1.8000	5.8000	10.4400
82	Ե/բետոնե հատակի պատրաստում 20սմ հաստ. B20 դասի բետոնից	մ ³	3.4400	44.4250	152.8220
83	Ամրանի արժեքը	տն	0.2820	328.9080	92.7521
84	40սմ հաստ. B20դասի բետոնից պատի պատրաստում	մ ³	13.4000	46.9010	628.4734
85	Φ 219*5մմ խողովակ	տն	0.0660	315.7130	20.8371
86	Φ 426*5մմ խողովակ	տն	0.0260	524.4420	13.6355
87	Ամրանի արժեքը	տն	0.0094	328.9680	3.0923
88	B25 դասի ե/բետոնե ծածկի սալի պատրաստում մտոցի վզիկի պատերով	մ ³	2.9000	50.8890	147.5781
89	Ամրանի արժեքը	տն	0.2190	328.9680	72.0440
90	Թուջե D=700մմ մտոց	հատ	1.0000	52.4450	52.4450
91	Հորի պատերի և ծածկի ջրամեկուսիչ շերտ 2 շերտ տաք բիտումով	մ ²	41.5000	0.7480	31.0420
92	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	19.5000	0.8290	16.1655
93	B15 դասի բետոնե հիմքի պատրաստում սարքավորման տակ	մ ³	0.4000	30.5690	12.2276
	Պոմպակայանի տեխնոլոգիական մաս				0.0000
94	Q=70.0լ/վրկ, H=10մ N=18,5կվտ կենտրոնախույս պոմպի տեղադրում	հատ	1.0000	59.7180	59.7180
95	Հետադարձ փականի տեղադրում Φ 250մմ	հատ	1.0000	108.3830	108.3830
96	Թուջե սողնակի տեղադրում Φ 300մմ	հատ	1.0000	121.6290	121.6290
97	Թուջե սողնակի տեղադրում Φ 250մմ	հատ	1.0000	108.3830	108.3830
98	Թուջե սողնակի տեղադրում Φ 125մմ	հատ	4.0000	36.7910	147.1640
99	Փականի տեղադրում Φ 50մմ	հատ	1.0000	6.6960	6.6960
100	Փականի տեղադրում Φ 25մմ	հատ	1.0000	3.9950	3.9950
101	Մետաղական փոխանցիչ d=300x200մմ	հատ	1.0000	5.7210	5.7210
102	Մետաղական փոխանցիչ d=25x250մմ	հատ	1.0000	1.4300	1.4300
103	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=325x6մմ	գմ	3.0000	20.9700	62.9100

104	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=133x4,5մմ	զմ	6.0000	6.9280	41.5680
105	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=50x3,5մմ	զմ	3.0000	2.6310	7.8930
106	խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից d=25մմ	զմ	4.0000	1.5080	6.0320
107	խողովակաշարի հիդրավլիկ փորձարկում	զմ	16.0000	0.0680	1.0880
108	Մետաղական ձևավոր մասեր	տն	0.0570	1113.5720	63.4736
109	Մետաղական խողովակների և ձևավոր մասերի 2 շերտ յուղաներկում	մ ²	4.5000	1.0050	4.5225
	Պնմպակայանի էլեկտրոտեխնիկական աշխատանքներ				0.0000
110	ABBГ 5x25մմ ² հատվածքով մալուխի անցկացում (խրամուղով)	զմ	180.0000	1.0840	195.1200
111	BBГ- 4x10մմ ² հատվածքով, մալուխի անցկացում պատով	զմ	5.0000	2.0530	10.2650
112	խողովակ վինիլաստե Φ 50x3,7մմ SDR13,6	զմ	10.0000	1.3930	13.9300
113	IV կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	7.0000	3.4980	24.4860
114	Ետլիքի իրականացում տեղի գրունտով ձեռքով	մ ³	5.5000	1.0140	5.5770
115	Ավելնորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափ մեքենայի վրա և տեղափոխում 13 կմ	տն	2.8500	2.8850	8.2223
116	Ավազե անկողին	մ ³	2.0000	3.7020	7.4040
117	Ավտոմատ անջատիչ եռաֆազ 80Ա	հատ	1.0000	11.4870	11.4870
118	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 63Ա	հատ	1.0000	8.7330	8.7330
119	Մագնիսական թողարկիչ 40Ա նումինալ հոսանքի ПМЛ	հատ	1.0000	14.3210	14.3210
120	Ռելե ջերմային 34Ա	հատ	1.0000	6.0830	6.0830
121	Կոճակ старт-стоп	հատ	1.0000	1.2570	1.2570
122	Հաշվիչ եռաֆազ երկսակագնային 50Ա	հատ	1.0000	8.4900	8.4900
123	4x40մմ շերտավոր պողպատի տեղադրում	զմ	15.0000	0.8100	12.1500
124	5X50x50մմ, L=2.5մ անկյունային պողպատի տեղադրում	հատ	3.0000	5.1150	15.3450
	Քարե պարիսպ L=42մ				0.0000
125	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	23.8000	3.4980	83.2524
126	Բնահողի ետլիք ձեռքով	մ ³	4.9000	1.0140	4.9686
127	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափների վրա և տեղափոխում 13կմ	տն	35.0000	2.8850	100.9750
128	B-7.5 դասի բետոնից նախապատրաստական շերտ	մ ³	0.9000	25.7640	23.1876
129	B-15 դասի բետոնե ժապավենային հիմքի պատրաստում	մ ³	14.0000	36.4620	510.4680
130	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ ³	3.8000	41.6380	158.2244
131	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 դասի բետոնից /13տեղ/	մ ³	6.8000	77.7770	528.8836
132	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.1600	328.9680	52.6349

133	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.0800	336.9140	26.9531
134	Միաձույլ ե/բ գոտու պատրաստում B-20 դասի բետոնից	մ ³	1.7000	50.3650	85.6205
135	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.0960	328.9680	31.5809
136	Ամրանի արժեքը Ac-1 դասի	տն	0.0300	336.9140	10.1074
137	Ներդիր էլեմենտներ /բետոնի մեջ/	տն	0.0650	509.3960	33.1107
138	Քարե շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.0700	390.3590	27.3251
139	Պատերի շարվածք կ/ձևի տուֆ քարից 20սմ հաստությամբ	մ ³	17.0000	19.2860	327.8620
140	Պատերի լավորակ ց/ավագե սվաղ ցանցով /այդ թվում միջուկների էլուստներ/	մ ²	96.0000	2.8910	277.5360
141	Նույնի ճակատային ներկում, մածկապատումով	մ ²	96.0000	0.6860	65.8560
142	Մետաղական փոշեներկված ճաղաշարերով դռների տեղադրում /1.2x2.1/մ 3ըեղ	մ ²	7.5600	27.0030	204.1427
143	Մետաղական ձևավոր ճաղաշարերի ապամոնտաժում H=2.7մ /Արշակունյաց փողոցի կողմից/	տն	0.6000	35.0720	21.0432
144	Ապամոնտաժված ձևավոր մետաղական ցանկապատի տեղադրում, առանձին ձողերի ուղղմամբ, լրացմամբ, խարսխմամբ	տն	0.6000	132.6700	79.6020
145	Արշակունյաց փողոցի ուղղությամբ առկա ձևավոր ճաղաշարերի 2 շերտ ներկում	տն	4.2000	27.6220	116.0124
	Նստարաններ և աղբամաններ				0.0000
110	Նստարանների տեղադրում /տեղադրման արժեքով/	հատ	80.0000	8.9110	712.8800
111	Աղբամանների տեղադրում թուջե եզրակալումով	հատ	40.0000	5.7920	231.6800
	Ջրուցատաղավար /1տեղի համար /				0.0000
